

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՆԻԿՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԳՐԱԿՈՒԹՅԱՆ
ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՆԲԱՃԱՆՆԵԼԻ ՏԱՐՐԵՐ**

Ն. Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ

Ցուրափանչյուր զարգացած հասարակության առջև այսօր ծառայած է բարձրագույն գիտելիքներով օժտված սերունդ կրթելու, որակյալ կադրեր պատրաստելու դժվարին խնդիրը, իսկ ժամանակի պահանջը պարտադրում է իրականացնել ոչ միայն համապատասխան մասնագետների պատրաստումը նոր տեխնոլոգիական հնարքներին համապատասխան, այլև պահանջի ընդհանուր զարգացածության բարձր մակարդակ: Այդ առումով կարևորություն է ստանում ոչ միայն սովորողներին խոր գիտելիքներով զինելը, այլև այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան կյանքի նիշտ ուղի ընտրելու, ուղի, որը լիովին կհամապատասխանի թե՛ անձի ընդունակություններին ու հակումներին և թե՛ հասարակության պահանջներին:

Ներկայիս մեր կրթության կառուցվածքի վերլուծությունը հավաստում է, որ բազմալիակ նախնիքն վիճակը անլիարժեք է դարձրել նաև կրթությունը: Մինչդեռ կրթության դերը մեր օրերում էականորեն աճում է: Աճում է ամենուր՝ անկախ տնտեսական զարգացման տարբերակվածությունից, հասարակական-տնտեսական ու բազմալիակ կառուցվածքից: Զգացվում է կրթական համակարգի արդիականացման խիստ անհրաժեշտություն, կրթության նկատմամբ նոր մտեցում:

Մեր հասարակության տարբեր շրջանների առջև ծառայած հիմնահարցերն ու դրանց լուծման անհրաժեշտությունն առավել ակնառու դարձրին մինչև այժմ եղած կրթական համակարգի անլիարժեքությունը: Աննախանձելի է կրթական համակարգի վիճակը՝ սկսած դպրոցից: Տազնապալից է աշակերտների զանգվածային անտարբերությունն ուսման հանդեպ: Հասարակության զարգացման համար խիստ վտանգավոր է սովորողների առաջադիմության ցածր մակարդակը, ուսման հանդեպ բացասական դիրքորոշումը: Մինչդեռ կրթությունն այն ժամանակ է դառնում ազգի զարգացումն արագացնելու, ազգային վերածնության նպատակներին ու բազմալիակության զգալիորեն հասնելու միջոց, երբ միանական ու առողջ են կրթական համակարգի բոլոր բաղադրամասերը:

Կրթության մեջ առանձնացվում է երկու բաղադրիչ, առաջինը՝ գործառականը՝ աճող սերունդին հանրաշնորհ օգտակար, արտադրողական կյանքին մասնակցության նախապատրաստելը, երկրորդ՝ կապված մարդու ներքին լայնանք: Մինչդեռ վերջին ժամանակներս մեր կրթական համակարգը գերազատություն տվել է առաջին բաղադրիչին, որի հետևանքը եղավ այն, որ կրթության բնագավառում սկսեց իշխել օգտապաշտական գործառույթը, որն իր հերթին նպաստեց կրթական համակարգի հետագա անկմանը:

Ներկայիս մեր կրթությունը վստահություն չի ներշնչում՝ ձգտելու կյանքի նոր հորիզոնների, որոնք թույլ տալին ձեռք բերել այն բանալի-գաղափարը, որը գիտակցելով՝ մարդը կարող է լիարժեք պատկերացնել ու ամբողջության մեջ տեսնել իրեն, իր ժամանակն ու հասարակությունը: Մեզանում (թող բարձրագույն շնչի) կրթությունը համառոտ են հեռացնում է մարդուն վե՛հ մտքից՝ առաջարկելով նրան անընդհատ զբաղվել առօրեականով, գործնականով: Նա մարդուն ներշնչում է իր՝ կրթության օգտապաշտական նշանակության մասին միտքը՝ ապակազմաբաղադրված նրան:

Ուսանողով մեկուկես տասնամյակ՝ մարդը հայտնվում է իր համար լիովին խորք աշխարհում: Նա ստիպված է լինում իրագործել միայն կրթության տեխնոկրատական գործառույթը: Մարդու հոգեկանում աննկատելիորեն ծնվում է այն գաղափարը, թե իր բարձրագույն կաշունը աշխատանքն է ձեռնարկությունում, կազմակերպությունում՝ հոգևոր կյանքի լիակատար բացակայությամբ:

Եվ ստեղծվում է մի իրավիճակ, երբ ամենի՛ք է դառնում ոչ թե անձի անկրկնելիությունը, այլ այն որակները, որոնք անձին դարձնում են բարձր նման: Այն գիտելիքները, որոնց մենք

ծգում էնք հաղորդակից դարձնել առող սերնդին, ոչ միայն շեն նպատակում նրանց անձնական փորձի ձեռքբերմանը, այլև ընդհակառակը, նույնիսկ մեկուսացնում են նրան իրական կյանքից: Ստեղծվում է մի իրավիճակ, որում մտավոր զարգացումը չի զուգորդվում հոգևոր զարգացմամբ:

Այսօր շատ է խոսվում կրթության մարդկայնացման (հումանիտարացման), ինչպես նաև՝ ակնհայտ կանոնադրական հաստատություններում հումանիտար սուղիվածության գիտակարգեր մտցնելու հիմնահարցերի մասին. հիմնահարցեր, որոնք գտնվում են մանկավարժների, հոգեբանների ու գիտնականների ուղադրության կենտրոնում աշխարհի շատ ու շատ երկրներում: Անընդհատ փնտրվում ու փորձարկվում են կրթության ոլորտում վերահիշյալ հիմնահարցերին նպաստելու միջոցներ:

ԱՄՆ-ի կառավարությունը կրթության ոլորտում ուղադրությունից դուրս մնացած մի շարք ինդիկների լուծում է առաջարկում «ԱՄՆ—2000» երկարաժամկետ ծրագրում: ԱՄՆ-ի կառավարությունը կարծում է, որ երկրի զարգացման ու բարգավաճման միջոց է ոչ միայն շուկան, իրավունքը, մասնավոր սեփականությունը, ռազմական հզորությունը և այլն, այլև կրթությունը, նրա նոր ճակատի ձեռքբերումը: Ծրագրում առանցքային են կրթության կատարելագործման, բացասական երևույթների շուտափույթ կանխման ու մի շարք այլ հիմնահարցեր: Մեծ է ԱՄՆ-ի կառավարության մտահոգությունը նոր սերնդի ձևավորման հարցում, ընդ որում, այդ գործում նրանք կարևոր տեղ են հատկացնում հոգեբաններին ու ըստ այդմ բարձրացնում համապատասխան մասնագետների հոգեբանամանկավարժական գիտելիքների մակարդակը: ԱՄՆ-ի հանրակրթական դպրոցների յուրաքանչյուր 300 սովորողի ընկնում է մեկ մանկավարժ-հոգեբան: Մտավորապես նման պատկեր է նկատվում նաև նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում: Իսկ մեծահասակների համար նախատեսված է յուրաքանչյուր 500 մարդուն մեկ հոգեբան:

ԱՄՆ-ի կրթական բարեփոխման հիմքում ընկած են կրթադաստիարակչական նամակարգի նկատմամբ նոր մոտեցումներ: Ամերիկյան մի շարք մանկավարժներ կրթական բարեփոխմանը նվիրված զեկույցներում այն տեսակետն են հայտնել, որ, օրինակ դպրոցում, որոշ սովորողներ պետք է անցնեն ակադեմիական ծրագրով՝ առաջարկելով որպես համապարտադիր ուսուցվող առարկաներ մտցնել, այսպես կոչված, «ընդհանուր միջուկ»¹: «Ընդ որում այս միջուկում պարտադիր են համարվում հոգեբանական և մարդաբանական բնույթի գիտակարգերը՝ հիմնավորելով դա հետևյալով. մարդը երբեք այնքան հիմնախնդիրներ չի ունեցել, որքան 20-րդ դարում: Դրա պատճառներից մեկը տեխնիկական գիտակարգերի բացարձակացումն ու զրան հակառակ հոգեբանամանկավարժական ու մարդաբանական գիտելիքների քերականացումն է, քանզի այդ գիտակարգերը խորացնում են անձի ինքնահանաչողությունը, աշխարհընկալումը և հանդես գալիս որպես անձի բազմաշերտ ու բազմաբովանդակ էս-պատկերները ձևավորող ու զարգացնող վեռորոշ գործոն:

Այսպիսով՝ դրանք դիտվում են որպես առանձնահատուկ գիտակարգեր, որոնք համադրում են մարդու և աշխարհի մասին օբյեկտիվ գիտական ու արժեքային պատկերացումները:

Այս հիմնահարցերն են, որ պարբերաբար դրվում են այս կամ այն երկրի կրթադաստիարակչական համակարգի բարեփոխման հիմքում, ստիպում կատարելագործել նախորդ համակարգը:

Այսօր նման որոնումների փուլում է նաև մեր կրթադաստիարակչական համակարգը: Զանաչողական առումով կարևոր ենք համարում որոշ զարգացած երկրների կրթական համակարգերին ծանոթանալը, որովհետև, ի տարբերություն մերիկի, նրանցը հարուստ անցյալ ունի և նույնիսկ հասցրել է մի քանի անգամ կատարելագործվել:

Ինչպես առաջադեմ շատ երկրներում, այնպես և Գերմանիայում, գործում է կրթական օարբերակված ուսուցում, սակայն վերջինս հիմնականում իր հիմքում ունի գերմանական կրթական ավանդույթների շատ ու շատ յուրահատկություններ: Գերմանական կրթական համակարգը երկար տարիներ կրթական ավանդույթների հանդեպ ցուցաբերում էր պանպանդակաձև մտնցում, այն դեպքում, երբ Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում նորամուծությունների մեծ հակում կար:

Կրթական համակարգերը կառուցվածքային առումով առաջացել են 19-րդ դարում, կառուցվածքի տեսական հիմնավորումը Լեխյայի բնասուր օտովածության հիման վրա համապատասխան դպրոցի ստեղծումն է:

Գերմանացի մանկավարժ ու փիլիսոփա Պետեր Պետերսոնը դեռևս դարասկզբին ճեարավոր է համարել իրականացնել գիտելիքների նպատակաուղղումը կրթության բովանդակությամբ մտղդասիրացմանը²: Նա այն կարծիքն ուներ, որ դպրոցի բարեփոխումը միշտ էլ կարող է

¹ Catalog 1945—1995, California State Polytechnic University, Pomona, P. 171,

² Forschungsbericht 1992—93, Universita't Rostoch, Rostok, 1994, s. 353—368.

տապալվել քառյակագրքաբանական մթնոլորտի քացակառուցման դեպքում: Պետերսոնն առաջ-
նորոգում էր հետևյալ սկզբունքով. ստեղծագործական հակումներն ու ընդունակությունները
հազվագյուտ շնորհ. ընտրյալների հակառակ դեպք: Ստեղծագործական ընդունակություններով
օժտված է յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր առողջ երեխա: Պետերսոնը շահում էր քաց-
հայտել այդ ընդունակություններն ու զարգացնել հնարավորին շափ: Այդ սկզբունքով առաջ-
նորոգվող դպրոց է Ամստերդամում գործող «Ինկկլարը»: Իպրոցի տնօրենը համոզված էր
հայտնում, որ հնարավոր է անձի վերափոխումն իր իսկ ուժերով: Իպրոցի խորհրդանիշը աղա-
ցի մեխանիզմ է, որի իմաստը, ըստ նրա, ամեն ինչի հիմքն է: Ռացի աղացի բևեռից, կեն-
տանկան մասում գտնվում է աղացի շարժիչը, որը ամենազիջալիս աշխատանքն է կատարում:
Նույն երևույթը սեսունը կենդանի անձի մեջ: Անհրաժեշտ է պարզապես հայտնաբերել այդ զլա-
վոր մեխանիզմն ու զարգացնել, որը նրան հնարավորություն կընձեռնի արդյունավետ գործելու:
Այս համակարգի կարևորագույն սկզբունքներից մեկը հետևյալն է. յուրաքանչյուր առողջ երե-
խա կարող է դասնալ տաղանդավոր անձնավորություն, եթե նպատակադրված նպատակն ըն-
ընդունակությունների զարգացմանը, պայմաններ ստեղծեն նրա արդյունավետ մտածողության
համար:

Իպրոցն ունի մարդ—հասարակություն—դպրոց օղակի վերաբերյալ իր հիմնական բաժնի
սկզբունքներն ու առաջնորդում է դրանցով: Իպրոցում կենտրոնական ու առաջնային շեշ-
տադրումն ընկնում է մարդու վրա. յուրաքանչյուր աշակերտի մեջ սերմ. նկում են պլաստիկա-
ցումներ մարդու էության մասին, որոնք ճիշտ ընդունելով՝ յուրաքանչյուր աշակերտ կկար-
գանա ապրել ու իր կենսագործունեությունը ծավալել հասարակության մեջ:

Մարդը, որպես եզակի անհատ, օժտված անհատական արժեքներով ու արժանապատվու-
թյամբ, անկախ ուսուսայից, ազդությունից, սեռից, սեռական դիֆերոնցիալներից, սոցիալական
միջավայրից, կրոնից, նախազգացումից, իրավունք ունի իր սկզբնական նախապահած ընթացակարգ:
Մարդը բնորոշվում է իրեն հասուն, անկախ մտածողությամբ, բնագիտական գիտակցությամբ,
ստեղծագործական ունակությամբ, սոցիալական արդարության զգացումով:

Այս համակարգը նախատեսում է աշակերտներին զինել մարդու ունակությունների, հաս-
կությունների, կազմավորման ուղիների, անձի միջոցով, մտածողության և այլ բարձր-
գույն իմացական գործընթացների վերաբերյալ գիտելիքներով:

Այս համակարգում մարդաբանական ու հոգեբանական գիտելիքները համարվում են կր-
թության բովանդակության անբաժանելի տարրեր: Այստեղ կրթության բովանդակությունը հա-
մապատասխանեցվում է ժամանակի պահանջներին, ըստ այդմ կատարվում է ուսուցման գործ-
ընթացի բարեփոխում ու վերակառուցում (ծրագրեր, դասագրքեր, ուսումնասիրական նյութեր
և այլն), մարդու մասին գիտելիքներ պարունակող տեղեկություններով հագեցում, անձնային
ուղիների ձևավորմանը նպաստող միջոցառումների, մեթոդների, միջոցների բնութագրում ու մշա-
կում:

Ֆրանսիայում գործող կրթական համակարգերից նախնական է մանկավարժ, հոգեբան
Ֆրենկի համակարգը: Այս համակարգի կարևորագույն թեզիսներն են. 1) գնահատական նշա-
նակելու ավանդույթի մերժում, ավանդույթ, որը ըստ Ֆրենկի, երեխաներին մղում է խաբեա-
թյան, ցուցադրական ճիպերի, անառողջ մրցակցության, փառասիրության,

2) քառյակական դաստիարակության կատարելագործումը:

Ս. Ֆրենկի կարծիքով կրթական ներկա համակարգին չի հաջողվում արդյունավետ գործել
երիտասարդության շրջանում, քանի որ քառյակական դաստիարակության քառյակ, խրատական
մակարդակից առաջ չի գնում՝ զրանով իսկ դառնալով ավելի ու ավելի վանող:

3) դպրոցի գործունեության կազմակերպում ունյակես, որ աշակերտները դաստիարակվեն
փոխօգնության, փոխադարձ հարգանքի, պատասխանատվության, անձնական արժանապատվու-
թյան սկզբունքով:

Ըստ էության մանկավարժական կողմնորոշումն էլ համակարգ է, որն իր մեջ ներառում է
դպրոցի բոլոր մանկավարժներին, դպրոցում գործող հասարակական կազմակերպությունները,
մեթոդիկաբանությունները, մանկավարժական խորհուրդը, որոնք միմյանց հետ կապված են գոր-
ծունեության ու համագործակցական զանազան ձևերով: Այն հանդես է գալիս որպես կառու-
վարման օղակ՝ օգնության ու ներազդման յուրօրինակ հնարավորություններով ու մեթոդներով:

Ս. Ֆրենկի կրթության մոդելի կառավարման հիմնական սկզբունքը, ամբողջ գործընթացի
հստակ պլանավորումը, պլանների ու ծրագրերի առանձնացումն ու տարբերակումն է: Ուսում-
նական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ դաստիարակչական կարևոր գործառույթ-
ները իրականացնում է սովորողների ինքնակառավարումը: Իպրոցում ստեղծվում է խորհուրդ,
որի տնօրենության տակ է գտնվում դպրոցի ամբողջ տնտեսական գործունեությունը: Իպրոցին

• Universite Paris 7, Livre de la Recherche 1987.

անհրաժեշտ ու վաճառքի համար նախատեսված բոլոր առարկաները երեխաներն իրենք են պատրաստում:

Խորհուրդը հսկում է կարգապահությանը, նա է բոլոր բախումների ու խախտումների իրեն-
նարկողն ու հարթողը, լավ գործը խրախուսողն ու զննատողը: Խորհրդում իշխում է խոսքի
լիարժեք ազատություն, որոշումներն ընդունվում են կոլեգիալ սկզբունքներով: Իճարկն ուսու-
ցիչները «վեռոյ» իրավունք ունեն, սակայն դրանից նրանք օգտվում են բացառիկ դեպքերում:
Ս. Ֆրենեի համակարգի կարևորագույն նպատակներից է բարոյականության ու քաղաքացիու-
թյան սերմանումը սովորողների մեջ: Սովորաբար ուսուցիչները կարծում են, թե գրել, կար-
դալ ու հաշվել սովորեցնելով՝ երեխաների համար բացվում է բարոյականության, քաղաքա-
ցիության ու մարդկայնության դուրը: Միևնույն Ս. Ֆրենեի կարծիքով մարդուն հարկավոր է
դարձնել իր ունեցած գիտելիքների տերը, այլ ոչ թե ստրուկը: Իսկ դրա համար անձի մեջ
անհրաժեշտ է ձևավորել արժանապատվության զգացում, իր իսկ արժեքի գիտակցում: Ինչ վե-
րաբերում է քաղաքացիության խնդրին, ապա անհրաժեշտ է դաստիարակել այնպիսի քաղա-
քացի, որը գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները, կարողանա իրականացնել
ժողովրդավարական երկրի ակտիվ անդամի գործառույթներ: Ֆրենեն այն կարծիք է հայտնում, որ
բարոյականությունը ոչ թե դաստիարակվում, այլ ձևավորվում է կյանքի ընթացքում:

Ս. Ֆրենեի մանկավարժությունը որպես էլակետ ընդունում է երեխայի շահերը՝ նպատակ
ունենալով անձի առավելագույն զարգացումը հասարակության մեջ, որում անհատն ու հասա-
րակությունը ծառայում են միմյանց: Միայն այս դեպքում երեխան կկարողանա իրականացնել
իր կոչումը, ձեռք կբերի արժանապատվություն, կայունություն՝ մեծանալով առանց կեղծիքի ու
շահագիտական նկատառումների:

Այս համակարգում ևս նկատվում է հոգեբանության և մանկավարժության սերտ կապի գի-
տակցում և միևնույն ժամանակ կրթական համակարգում դրանց կիրառում:

Հոգեբանության և մանկավարժության միջև եղած կապը ավանդական է: Մանկավարժները
վաղուց արդեն այն տեսակետն են հայտնել, որ մարդու համակողմանի կրթադաստիարակչական
գործընթացը հաջող իրականացնելու իրական պայմանը մանկավարժահոգեբանական ասպեկտ-
ներով առաջնորդվելն է: Ուստի, առավել սերտ պետք է լինի կապը մանկավարժների ու հոգե-
բանների միջև: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է զինված լինի մանկավարժահոգեբանական
ու մարդաբանական գիտելիքներով, ունենա գիտելիքներ մարդու ունակությունների, հատկու-
թյունների, որպես մասնագետ՝ նրա կազմավորման ուղիների, հիշողության, մտածողության և
այլ իմացական գործընթացների մասին: Դա կնպաստի սովորողի մեջ արմատավորելու քաղա-
քացիական գործունե գիտություն, կրթական-մշակութային բարձր մակարդակ, մարդու նկատ-
մամբ զգայուն վերաբերմունք և պատրաստելու ազգային արժանապատվությամբ օժտված մաս-
նագետներ:

Իսկ ինչ բան են մանկավարժահոգեբանական ու մարդաբանական գիտելիքները: Նախ ա-
սենք, որ ժամանակակից հոգեբանությունը գիտությունների նյութավորված մի համակարգ է,
որն ուսումնասիրում է մարդու հոգեկանի տարբեր կամերն ու դրևորումները: Հոգեբանական-
կավարժական ճյուղը նվիրված է մարդկանց ուսուցման ու դաստիարակության հոգեբանական
օրինաչափություններին: Խնդիր, որի իրականացման համար մանկավարժական հոգեբանությու-
նը ենթվում է հոգեբանության մի շարք ճյուղերի նվաճումների վրա: Դա անհրաժեշտ է կրթու-
թյան բնագավառում սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու, նը-
րանց հնարավորություններն ավելի ճիշտ ու լրիվ օգտագործելու համար: Հետևաբար, այս գի-
տելիքները հնարավորություն են տալիս ոչ միայն ճիշտ հասկանալու և օգտագործելու սովո-
րողների տարիքային, անհատական առանձնահատկությունները, այլև իմանալու, թե ինչպիսի
անհատական առանձնահատկություններ կարող են ձեռք բերվել ուսուցողական ու դաստիա-
րակչական զանազան տեսակի ներգործությունների արդյունքում:

Ներկայումս խիստ այժմեական են աշակերտների, ինչպես նաև ուսանողության՝ որպես
սոցիալական խմբերի, ներխմաբային փոխհարաբերություններին, ուսուցիչ-աշակերտ, ուսանող-
դասախոս փոխհարաբերություններին առնչվող հարցերի ուսումնասիրությունները և դրանց ան-
միջական գործածությունը կրթադաստիարակչական համակարգում:

Կրթության բովանդակության անբաժանելի մաս պետք է կազմեն մարդաբանական գիտե-
լիքները: Մարդաբանությունը մարդու ծագման և զարգացման, մարդու ֆիզիկական կառուց-
վածքի կանոնավոր տարատեսակների մասին գիտություն է, որի նվաճումները մեծ նշանակու-
թյուն ունեն մարդու բնական հիմքերը հասկանալու համար:

Հոգեբանամանկավարժական և մարդաբանական գիտելիքների ոչ բավարար մակարդակը,
դրանց նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, այդ գիտելիքների անեսուսումը կրթության բնու-
յթավառում, մարդու մասին ոչ լիարժեք պատկերացումները խոչընդոտում են ակտիվությամբ
ու բարձր ինքնագիտակցությամբ անհատի ձևավորմանը, որն ունակ լինի ճանաչելու մարդ-
հասարակություն անխզելի կապը:

Մեր սերնդի բնականոն զարգացմանը խոչընդոտող հանգամանքը հղի է բախումներով: Այս հիմնահարցը կապված է կրթական համակարգում լուրջ բարեփոխումների հետ և պահանջում է գիտականորեն հիմնավորված լուծումներ: Նախևառաջ անհրաժեշտ է.

ա) լուսավորության ոլորտում այս բնագավառի մասնագետների անհրաժեշտ քանակի ապահովում,

բ) մասնագետներ պատրաստելու համար ուսումնական հատուկ ստորաբաժանումների ստեղծում,

գ) այդ բնագավառի մասնագետներ պատրաստելու համար ուսումնական պլանների ու ծրագրերի ստեղծում,

դ) առարկաները դասավանդելու համար մեթոդիկայի գծով ուսումնական նյութի մշակում:

Մեր խորին համոզմամբ կրթության բնագավառում անհրաժեշտ է կատարել լուրջ բարեփոխումներ, բնորոշել կրթության բնագավառում պետական ֆադախականության գիտականորեն հիմնավորված ծրագիր, միաժամանակ դասավանդել նոր առարկաներ, վերանայել ուսումնական ծրագրերը, դասագրքերն ու ուսումնական պլանները, ստեղծել նոր դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:

Н. Р. АКОПЯН — Психологические и антропологические знания как часть содержания и структуры обучения. — Автор предлагает пути усовершенствования образования, обогащения обучения системой психологии и антропологии как важнейшим фактором формирования интеллекта и высокого самосознания активной личности.